

**Հ Ա Յ — Դ Ա Մ Ի Ն Ի Կ Ե Ս Ա Ն Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն**  
**Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր ՈՒ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր**

(Շարումակութիւն. տես Բազմ. 1922 Յունիար. էջ 188)

Տ. Յ.՝ Քոննեցւոյն խումբէն մի քանի ուրիշ գրութիւններ եւ գրիշներ:

Թիշեցինք արդէն Եր. Բարդողիմէսոսի ընկերը՝ Պիտրոս Թերապոնեցին, աշխարհիկ գրիչ, որ Թարգմանեց Գետր. Արագոնացւոյն ճառարկ և հաւանարար Քոննեցւոյն խումբին մէջ կը գտնուէր: Խնչպէս նաև Ներսէս պաւլոց (Պաղոն), եպս. Արմեայ և աշակերտ Յովհ. Քոննեցւոյն, ասա միւսներէն աւելի յարեցաւ լատին ծէսին և չափազանց եռանդովն ողջ մասնակցաւ: Խնչպէս նոր Դանիէլ Դաւթիեցի, Մարտիր. Պ. Թաղէսոս Վանքին կրտսեր Եղբայրներէն, որ ցուցամոլութեամբ ինքզինը լատին բահանայ կը Կոչէր, և ստէպ կռուի մէջ էր իր ազգակից հայերուն հետա Թարգմանեց կամ թէ բազմաթիւ յաւելում ներով ընդարձակց Եղ. Մարտիրոս Պողոնի Վարք կայսերաց և Հռոմայ Քահանայապետաց գործը: Թարգմանութեան ընագիրը կը գտնուի ի Ա. Ղազար: Ամանը Հայոց հեկեղեցւոյ մոլորութեանց վրայ զրբյկ մ'ալ իրեն կ'ընծայեն, որ հաստատուն հիմ մը չունի կ'ըսէ նիւման. և սակայն ճիշտ կ'երեկ այս կրտ. Կարգի Եղ. Դանիէլի մէկ գործէն՝ որ կը կոչուի Պաշտպանուրին Հայոց տրամած մորուրեանց (Բարդի, Աղբ, Գրատ.):

Քոննեցւոյն հետ պէտք է յիշել նաև կաֆայի երկու եպիսկոպոսները, երկու Թաղէսոները: Առաջինը Վլացի էր, ծնածի կ կաֆա (Թէղոսուիա) և 1823ին արդէն իսկ եպիսկոպոս էր կաֆայի (հաւանարար նոր ձեռնազորուած), ինչպէս յայտնի է Քար. կարգէն երկու եպիսկոպոսներու 6 հոկտ. 1823ի մէկ վաւերաթուղթէն: 1826ի Ապր. 11ին Յովհ. իթ. հրաման

տուաւ իրեն որ կարենայ ութ ընկերներով թիսուսի գերեզմանը այցելել: Այս թաղէսոսին կ'ընծայեն վկայարանութիւն մը և մայր մաշտոց մը՝ որոնց վրայ վերջէն կը գտնանք:

Միւս Թաղէտոս կաֆայի վրայ կը դրուի 1334ին, մարտ 11ի Կոնգակով մը. կը մենի 1357ին օգոստ. 23ին: Խնքը Թարգմանած կը տեսնուի 1354ին: «Եինովինե տեսայ Գ. Ա. Քոննեայապետի Յշ. Խորհրդոյ Ա. Անդանյին վեց գրեթե. Խնչպէս կը յիշէ Հ. Ակիշան (Սիսական, 385):

Ակիթն է հոս Ա. Թովմասի գործերուն Թարգմանութեանց վրայ ալ քանի մը խօսը ըսելու, յորս Եր. Բարթ., Եղին. Քոննեցի և Յակոր Թարգման իրենց մասն ունեցան՝ ինչպէս ըսինք: Ըստ աւանդութեան՝ Ա. Թովմասի երկու բովանդակութիւնը ալ (աստուածաբանութեանը և Ընդդէմ Հեթանոսացը) հայերէն թարգմանած է Բարթ. իր ընկերներով. որնցմէ ձեռքերնիս հասած է միայն Յովինդ. աստուածաբանութեան Գ. մասը՝ զրեթէ ամրոջական, և Գ. մասի Յաւելուածին Ա-Եթի խնդիրները, որ են Քրիստոսի և Ա. Խորհրդոց վրայի ճաները:

Զարմանալի չէ որ միայն ասոնք մասցած ըլլան, վասն զի միւս մասերէն աւելի օգտակար ըլլանով ոչ-ուղղափառ Հայոց վարդապետական սիալներուն դէմ: շատ անզամներ օրինակուած պէտք են ըլլալ: Հաւանարար այս պատճառու է որ Թարգմանած են ուրիշ շատ գործեր ալ: — Բովանդակութեան Գ. մասը Թարգմանած է Յովհ. Երջնկացի՝ Մործողի վանքին մէջ՝ Զարարիա Մործողեցւոյ և Բարթ.ի աշխատակցութեամբ 1825ին, որով Քոննեցւոյն միաբանութիւնը հաստատուելէն առաջ

թարթ, դեռ այն ատեն հայերէնը չէր սոր-  
գած, այլ պարսկի լեզուով կը ունար յարմար  
եղբները թէ լազարել (տ. Ասմաւ, Չոաց  
delle opere tradotte, 37), Շատ մը հայ  
գրի շնորու համեմատ թարթ, իր ընկերնե-  
րով 1329ին թարգմանած է ոչ միայն  
Ս. Խորհրդոց ճառը, այլ նաև Քրիստոնա-  
րանութիւնն որ է Գ. մասը, և անոր Յա-  
ւելուածք մինչև Վերջնը մարդոյ։ Այս  
թարգմանութիւնն հաւանաբար այն ատեն  
եղած է, երբ թարթ։ և ընկերները Մա-  
րազա կը գտնուէին Յովկի. Քոնցւոյն քով,  
թարգմանութեանս երկորորդ կեսը հաւա-  
նաբար Գիրք եօրն Խորհրդոց է, զոր Յովկի.  
Մարազայի մէջ թարթուումէսուի հետ  
թարգմանեց, կ'ըսէ կալանու։

Թէ Ծործորոյ վանքին (1325) և թէ  
Մարազայի (1329) թարգմանութիւնը կը  
պարունակէր հաւանաբար Գ. մասի Յա-  
ւելուածին Ա-ԿԻ ինդիրները։ Վասն զի  
այս երկու թարգմանութեանց ալ երկորորդ  
մասը հազիւ կարելի էր Գիրք Խորհրդոց  
կոչել, մթէ Գ. մասին Կ-Ղ խնդիրները  
միայն պարունակէր։

Եթէ ապացուցուք որ 1325ի կամ  
1329ին Հայ թարգմանութիւնը կը պա-  
րունակէր նաև Յաւելուածին մէկ մասը,  
այդ Յաւելուածին ամենահին վկայութիւնը  
պիտի ըլլար այս Խորհրդոց վարդապե-  
տութիւնը պարունակող Գ. մասին ուրիշ  
թրգ. մ'ալ կայ Վատիկանու 1415ի հայ  
գրչազիր մը մէջ (թիւ 45), և է եղ. Պետ-  
րոս Արքանացւոյն և եղ. Յակոպ թարգ-  
մանին 1347ի թարգմանութիւնը, կը պա-  
րունակէ բովանդակութեան Գ. մասին  
Կ-Ղ խնդիրները, և Յաւելուածին Ա-ԿԻ  
ինդիրները, որ է Ս. Խորհրդոց ամրող  
ճառը։

Թարիզու Ազգ. Գրադարանը հայ գրչա-  
զիր մ'ալ ունի ժիշ դարու (թիւ 134)  
որ կը պարունակէ Քրիստոնաբութիւնը  
(—Գ. մաս, ինդ. Բ-ԾԹ), սկիզբն ու  
վերը թէ բերի է, առ այժմ չկրցանը որոշել  
թէ ո՞ր թարգմանութիւնը կը ներկայացնէ,  
Ծործորոյ թէ Մարազայ կամ թէ Քըու-  
նեցւոյն։

Յիշաւի շատ կարևոր գործ պիտի ըլ-  
լայ յիշեալ, ու թերեւս ուրիշ տեղեր ալ  
ծածկուած զըշազիրներու Հրեշտակային  
վկարդապետի գործերուն ամենահին թարգ-  
մանութեանց հրատարակութիւնը։

Այդ գործերուն մէջ՝ որ գեռ այնքան  
որոշ չենք զիտեր Քոնցւոյն ընկերաց թէ  
յաջորդներուն ընծայել, յիշենց նաև Միկ-  
նուրին Յայտնութեանը, 27 զլուխներով,  
որ կը գտնուի Պերլինի թ. 74 զըշազիրն  
մէջ՝ եղ. Յովկ. Անկլուսի գործերէն վերջ։  
Հարամեանց նկարագրելով այս գրչազիրն՝  
կ'ըսէ թէ այդ գործը հաւանաբար Միար-  
եղարաց կարգէն մէկունն է. մանաւանդ  
որ այս ատենները մեծ խնդիր կը յարու-  
ցանէն Յայտնութեան վրայ՝ կրտսեր եղ-  
թարաց և Քոնցւոյն շատ կէտերու մէջ հա-  
կառակ աստուածաբանները։

Մէծն Այրեսուի աստուածաբանութիւնը.  
Լատիններէն թարգմանութիւն ԺԴ դարու՝  
անանուն մէկնչի մը, ինչպէս կը յիշէ  
Ասմաւ, Ալիշան զայն Արագոնացւոյն Կըն-  
ծայէ (Սիսական, 384):

Յղ. նմաներանց իրաց գրեթե, շատ  
ծանօթ զրութիւն եղ. Յովկ. Ա. Ճեմինեանի  
ի կ. Քար. որու համառոտւած հայ թարգ-  
մանութիւնը կը գտնուի Բարիզ (Ազգ. գրադ.  
թիւ 312):

Հուսկ տեսնենը թէ արդեօք ԺԴ դարու  
այդ պատմական աղքիւրը՝ զոր կալանոս  
միշտ զործածեց և պատմական մասն ըն-  
դարձակեց՝ Քոնցւոյն խումբին և անոնց  
անմիջական յաջորդներուն տալու է. վասն  
զի ամրող Նիկլիք այնպէս մը կը պարզէ՝  
որ աւելի միարանող եղօրէ մը կը սպա-  
սուի՝ քան ուրիշէ մը Ալեքլի կանոնագրա-  
կան՝ զրութիւն մ'է ան՝ քան պատմական։  
Ոչ միայն բանիւ և փաստերով, այլ աւան-  
դութեամբ ալ կը չանայ միշտ ցոյց տալ  
որ հոռմէական միութիւնը եղած է, որ  
Հայ եկեղեցւոյն հին Հայորեք և հին Ժո-  
ղովները ընդունած են միշտ ուղղափառ  
հաւատը և ոչ մէկ էական կէտի մէջ  
տարբերած են հոռմէականէն։ Սակայն  
երբեմն չափազանց դիւրութեամբ կը հաս-

տատէ հեղինակը՝ ինչ որ ինք կը փափա-  
քի որ ճիշտ ըլլայ. և այս սխալները ոչ  
միայն չի սրբազրեց կալանոս, այլ և  
ընդարձակեց և բազմացուց:

Գրչազիրը զոր գործածեր եմ, կ'ըսէ  
կալանոս, կափա քաղքէն կու գար, ուր  
էր Միար. եղբարց զլիաւոր ուսումնատե-  
ղին, գրուած 1866ին: Պատմական մասը  
Յովն. Քոնդեռոյն նամակով կը վերջացնէ,  
յորում ընդարձակօրէն կը պատմէ իր միա-  
բանութեան հիմարկութիւնը:

Ա. Ժիովիեց Հ. Գէորգ ՌԱԿԵԼԻՆ

(Շարութակիլի)



## ԱԲՐԱՀԱՄ ՆԱՀԱՊԵՏ

•••••

Հնախօսը և սրբախօսը Արքահամ  
նահապետի անուան ներքեւ շատ ինդիր-  
ներ յուզած են: Հետևելով Քրիստոնէական  
Բառարանին՝ ակնարկ մը տալ կը փափա-  
զինք ասոնցմէ մի քանիներուն:

Աբրահամու զոհի. — կը գտնենք նահա-  
պետին վրայ պատուածներէն, ինչպէս  
իրեն մատուցած իսահակ որդուոյն գոհի,  
որ բոլորովին խորհրդակիլ մ'է Յիսուսի  
Քրիստոսի կատարած զոհին: Ծննդոց  
զիրբը կը պատմէ, որ ինչպէս ինքը կը  
հնազանդի և կը հաւանի Աստուծոյ հրա-  
մանին՝ ողջակէց մատուցանելու իր միակ  
որդին, և իսահակ կը հնազանդի հօրը և  
անձամբ կ'ընդզրկէ ողջակիզման փայտը, և  
միամին կ'ելեն ըլլան վրայ: Նոյն և  
նման Որդին Աստուծած մարդանալով կը  
փափափի ընլանիլ բաժակն, և ինքն է որ  
խաչափայտն առած ուսուցը վրայ՝ կ'ելլէ  
զէպի Գողգոթա բլուրը:

Խորիրդանիշիս մելունութիւնը. — Քրիստո-  
նէութեան առաջին դարէն սկսեալ Արքա-  
համու զոհը մեկնուած է՝ իրեն օրինակ  
Քրիստոսի Քրիստոսի զոհին: Փողոս Առար-

քեալ Երրայեցւոց Թողթոյն մէջ (ԺԱ. 19)  
կ'ըսէ. Արքահամ պատարագ մատոյց իսա-  
հակը, և միամօրը կը մատուցանէր.  
որուն համար ըսուեցաւ թէ իսահակով քեզ  
զաւակ պիտի կոչուի, միաբը զրաւ թէ  
կարող է Աստուծած մեռանաներուն յարու-  
թիւն տալ. ուստի և օրինակ ընդունեցաւ  
զայն, այսինքն նա օրինակ եղաւ հանդեր-  
ձելոյն, որուն հայ թարգմանութիւնը կը  
դնէ: «Ուստի և յասակ իսկ ընկայա զեա»,  
որ թարգմանութիւն է յոյնին «Ճեւ աւծոն  
ոչ ու ու պարձով է շօմութուուու»: Եկեղեց-  
ւոյ շատ Հայրեր նմանութիւնն շատ ան-  
գամներ իրենց զրոց մէջ նշանակեցին:  
կը գտնենց ծիստաններու մէջ ալ յիշա-  
տակուած՝ զոհիս նշանակութիւնը, ինչպէս  
Ո. Կիւրեղ աղեքսանդրացոյն և Յակոբիկ  
Ասուոյ և այլ պատարագամատոյցնե-  
րուն մէջ:

Կան յուշարձաններ զոհիս՝ երկրորդ  
դարէն սկսեալ ըլլայ ձեռագիրներու մէջ,  
ըլլայ մանաւանդ գետնադամբաններու,  
գերեզմանագրաբերու, եկեղեցոյ և սրբա-  
զան վայրերու որմերու վրայ: Նկարներս  
կամ որ զրուագուած են բարերու վրայ,  
կամ ինձանկարներ են զանազան ձեհրով  
և խորհրդանշերով: Արլի մէջ կը տես-  
նենց զեռ այժմ եօթնակամարակապ զամ-  
բանի մը վրայ զԱրքահամ՝ ձեռքը սուր  
և սեղան մը: Լատերանեան թանգարանին  
մէջ Յունիոս Բասոսի որմանիակ զամբա-  
նին վրայ նոյնը նկարուած է, և այլն:  
Կան փղոսկրեայ սնուուկ, արծաթ զգալ,  
ոսկեզօծ բաժակներ, ապակէ բլիպանակ-  
ներ, կապարեայ ձուլածոներ, կաւէ  
ամաններ և այլն, որոնց վրայ կան դրու-  
գուած Արքահամու զոհը, շատերը երրորդ  
դարու գործեր:

Յայստնութիւն (Apocalypse) Աբրահամու-  
— Անվաւեր զրուածոց մէջ կը յիշով  
Արքահամու յայտնութեան զիրք մը, ըստ  
Ո. Եսպիփանու յոյժ չար արտազրութիւն  
մը, որուն հեղինակ կը համարուին Աե-  
թեան աղանդաւորներ: Կայ ևս իրեն ըն-  
ծայուած կասկ մը, որուն երկու յոյն  
բնագիր օրինակներ հրատարակուած են,